

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՊՈԼՍՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՆՑՆԱԼԸ ԵՒ ՆԵՐԿԱՆ (ՉԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 110-ԱՄԵՆԱԿԻՆ ԱՌԹԻԻ)

Եթէ արևելահայոց քաղաքական-հասարակական կեանքին վրայ ազդող անձնատուրուրիները սաներն էին Քիֆլիսի ներսիսեան դպրոցի, ապա արևմտահայոց մէջ նոյն դերն ստանձնեցին Պոլսոյ Ազգային Կեդրոնական վարժարանի շրջանավարտները: Արևելահայոց եւ արևմտահայոց համար շատ մեծ նշանակութիւն ունեցող այս երկու կրթօջախները, կարծեք թէ, նախահնամուրեան բարձր տնօրինութեամբ, հիմնուած էին երկու ներսէներու կողմէ. առաջինը ներսէս Ծ Աշտարակեցի կաթողիկոսի (1843—1857), իսկ երկրորդն ալ ներսէս Վարժապետեան պատրիարքի (1874—1884) եւ Ամենայն Հայոց ընտրեալ կաթողիկոսի (1884) կողմէ:

Ներսէս Վարժապետեանը, աւազանի անունով Պօղոս, ծնած էր Պոլսոյ Խասգիւղ թաղին մէջ 28 Յունուար 1837 թուին: Իր նախնական ուսումը Պոլսոյ ներսիսեան վարժարանին մէջ ստանալէ յետոյ, 1855 թուին, կ'ուղևորուի Ադրիանապոլիս, իբրև դասատու տեղւոյն վարժարանի: 1865 թուին վերադառնալով Պոլիս՝ հիմնադիրներէն մին կ'ըլլայ Նուպար-Շահնազարեան վարժարանի: 1870-ին Նիկոմիդիոյ առաջնորդ կ'ընտրուի, ուր եւս հետամուտ կ'ըլլայ ուսումը զարգացնելու եւ նոր դպրոցներ բանալու գործին: Ներսէս Վարժապետեանը 1874 թուի ապրիլին արևմտահայոց կողմէ կ'ընտրուի արքեպիսկոպոս Կ. Պոլսոյ եւ պատրիարք հայոց Տաճկաստանի¹:

Վարժապետեանի գահակալութեան շրջանը կը տևէ 10 տարիներ: Եւ եթէ նկատի առնուի նախորդ պատրիարքներու զէմ ժողովուրդին կողմէ յարուցուած վէճերը, որոնք յանգեցուցած էին հրաժարելու պատրիարքներուն. բաւականին երկար էր Վարժապետեանի գահակալումը, որ ընդհատուեցաւ մահով:

Ներսէս Պատրիարք 9 Մայիս 1884-ին Ս. Էջմիածնի մէջ կատարուած կաթողիկոսական ընտրութեան ժամանակ կը ստանայ 27 ձայն եւ կ'ընտրուի կաթողիկոս: Վարժապետեանը, սակայն, կը մերժէ այդ որոշումը եւ իր հրաժարականը կը ներկայացնէ Ցարին: Վերջինս

նախ կը մերժէ այդ հրաժարականը, բայց, ի վերջոյ, կ'ընդունի Վարժապետեանի առողջական պայմաններուն պատճառով: Քանի մը ամիս յետոյ ալ, 7 Դեկտ. 1884 թուականին, ներսէս Վարժապետեանը կը վախճանի Պոլսոյ մէջ²:

«Պատմութիւնը մեր ազգին համար անմահացուցած է Վարժապետեանի անունը եւ մենք հարմար շնք դատեր գրել այն ամէն գործերն, զոր գործած է»³:

Ներսէս Վարժապետեան անունը անմահացած է նաև իր իսկ կողմէ ստեղծուած Ազգային Կեդրոնական վարժարանի միջոցով:

Այն ժամանակ Պոլսոյ եւ գաւառներուն մէջ կային նախակրթական ուսում ջամբող շատ մը վարժարաններ, սակայն չկար այդ դպրոցներէն շրջանաւարտ երիտասարդներուն երկրորդական ուսում տալիք բարձրագոյն վարժարան մը:

Այս հարցը կը գտնուէր Ուսումնական խորհուրդի օրակարգին վրայ: Ժամանակուան պատրիարք Վարժապետեանը եւ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ թաղխորհուրդի անդամ Ստ. Փափազեանը մօտէն կը հետաքրքրուէին այս հրատապ հարցով: Նոյնիսկ Փափազեանը 1876 թուին Ղալաթիոյ եկեղեցւոյ բակին մէջ կառուցել կու տայ վարժարանի շէնքը, եւ որովհետև անհրաժեշտ գումարը չկար՝ կարելի չըլլար բանալ վարժարանը⁴:

Դեկտ. 1882-ին, ներսէս Պատրիարք պէտք եղած գումարը հաւաքելու նպատակով 17 հարուստ ազգայիններու հետ ժողով մը կը գումարէ Պատրիարքարանին մէջ: Այդ օր կը հանգանակուի 1450 օսմանեան ոսկի: Սակայն, ներսէս Պատրիարքի հիանդութեան պատճառով, հանգանակուած գումարը կը մնայ անգործածելի: Երկու տարիներ յետոյ, 20 Մայիս 1884 թուին, Ուսումնական խորհուրդը Վարժապետեանի Օրթագիւղի մէջ գտնուող բնակարանին մէջ ժողով մի կը գումարէ: Տրուած որոշումը հետևեալն էր. «Ուսումնական խորհուրդն այսօր 20 մայիս ընդ նախագահութեամբ Սըրբազան Պատրիարք Հօր, ի նիստ գումարելով

¹ Տէ՛ս Մազ. պտրք. Մրմանեան, «Ազգապատում»:
² Մեսրոպ արք. Աշնեան, «Էջեր հայ եկեղեցւոյ պատմութենէն», Եր., 1994 թ.:
³ Յ. Պարոնեան, Ազգային ջոջեր:
⁴ Ա. Ալպոյանեան, Միհաս Զերազ, Գահիրէ, 1927 թ.:

Եւ Կեդրոնական Ուսումնարանի հաստատութեան խնդրոյն խորհրդակցելով հաւանեցաւ, որ Նորին Սրբազնութեան նախաձեռնութեամբ ասկէ մէկ ու կէս տարի առաջ նոյն նպատակաւ կազմեալ Յանձնախումբը գումարուի եւ մինչև 15 օր իր ձեռնարկութեանց եւ դիտողութեանց մասին վերջնական պատասխան հաղորդէ Ազգային Վարչութեան Սրբազան նախագահին եւ մինչև այն ատեն վերջին անգամ Քաղաքական ժողովոյ եւ Ուսումնական խորհրդոյ համագումար նիստին մէջ որոշեալ կարգադրութեան գործադրութիւնն յետաձգուի»⁵:

7 Դեկտ. 1884-ին վրայ կը հասնի Վարժապետեանի մահը: Կեդրոնական Ուսումնարանի հաստատման գործով զբաղուող յանձնախումբը կը վերափոխէ վարժարանի անունը, եւ, ի պատիւ հանգուցեալ հովուապետին, զայն կը կոչէ «Ներսէս Վարժապետեան» Ուսումնարան: Կը հրատարակուի նաև 28 Դեկտ. 1884 թուակիր յայտարարութիւն մը, ուր ի միջի այլոց կը կարդանք. «Ա) Ի յիշատակ Ներսէս Պատրիարքի, վայելուչ շիրիմ մը կանգնել Մայր եկեղեցւոյ մէջ, Բ) Ներսէս Վարժապետեանի անուամբ Ուսումնարան մը հաստատել, ուր ընդունուին թոշակաւոր եւ ձրիավարժ աշակերտներ, գիշերօթիկ եւ ցերեկեայ: Գ) ՎՆՏ. Սուլթանին կողմէ հոգելոյս Պատրիարքին պարգեւեալ Օրթագիւղի տան մէջ բանալ առ այժմ այդ վարժարանը (եթէ հնար լինի): Դ) Արդէն ստորագրեալ 1450 ոսկւոյ գումարն յատկացնել Ուսումնարանի բացման եւ նախնական ծախսոց: Ե) Անմիջապէս ամէն երկրի ազգայնոց հրաւեր կարգաւ հանգանակութեան մասնակցելու, արդիւնքն եկամուտի վերածելով Ուսումնարանի գոյութիւնն ապահովելու եւ աղքատ աշակերտներ ընդունելու համար»⁶:

Բոլոր այս նպատակներուն իրագործմանը համար կը կազմուի Գործադիր մասնախումբ մը, որն կը ստանձնէ նաև Կեդրոնական վարժարանի հոգարարութիւնը: «Ներսէս Վարժապետեան Ուսումնարան» անունը ընդունելութիւն չի գտներ եւ վարժարանը վերստին կ'անուանուի «Կեդրոնական»:

Հոգարարութեան անդամներն էին Աբիկ Ունճեանը, Մկր. Էսաեանը, Ս. Կիւպէնկեանը, Յար. Նորատունկեանը, Ա. Հաճեանը, Տ. Բարազամեանը, Յովհ. Թորոսեանը, Յովհ. Ծուսուֆեանը, Կարապետ Սըվաճեանը եւ Մինաս Չերազը:

Վերջապէս, 1 Սեպտ. 1886 թուականին կը բացուի Ազգային Կեդրոնական վարժարանը 60 աշակերտներով Մ. Չերազի տնօրինութեամբ:

Իսկ վարժարանի նիւթական կարիքները հոգալու սխարտականութիւնը իր վրայ կ'առնէ խնամակալութիւնը:

Ազգային Կեդր. վարժարանը կոռուած էր ըլլալու «այնպիսի հաստատութիւն մը, որ ոչ միայն համապատասխանէ մայրաքաղաքիս մէջ հաստատեալ բազմաթիւ վարժարանաց, այլ նաև եզակի դիրքովն, ուղղութեամբ ու Հայ ուսանողին համար բացառիկ առաւելութիւններով տայ այն արդիւնքները, զորս անկարելի է յուսալ օտար կրթարանաց մէջ»⁷:

ԿԵՆՐՈՆԱԿԱՆՆԻ ՏՆՕՐԷՆՆԵՐԸ

Ինչպէս վերն ալ յիշեցինք, երբ կը բացուի Կեդրոնական վարժարանը, տնօրինութիւնը կը վստահուի Պեղիկի վեհաժողովին մասնակցած հայ պատուիրակութեան անդամ, ազգային մեծանուն գործիչ եւ Հայ Դատի անխոնջ ծառայող Մինաս Չերազին:

Մինաս Չերազ իր երեք տարուան տեսլութեան շրջանին այնպիսի գործունէութիւն մը կը ծաւալէ վարժարանէն ներս, որ իր անշնչելի կնիքը ու ուրոյն դիմագիծը կը թողու Կեդրոնականին վրայ:

Կեդրոնականի սաներէն մեծ բանասէր Ա. Ալպոյաճեանը հետեւեալները կը գրէ Չերազի մասին. «Չերազ, որ գիտէր իր հոգիէն բան մը փոխանցել բոլոր իր աշակերտներուն կրցած է Կեդրոնականին մէջ ստեղծել ազգայնական մթնոլորտ մը, որ խանդավառութեան ընդունակ հոգիներ կրցած են ծայր ստանալ եւ սովորականէն դուրս նկարագրով անհատներ Երեւան գալ այդ հաստատութեանէն»⁸:

Արշակ Ալպոյաճեանի խօսքերը վկայելու կը փութան նաև Զէյթունի դէպքերու վարիչներէն Կարապետ Թուր-Սարգիսեանը եւ «Պանք ՕՔթոմանի» նահատակ-վարիչ Բաբգէն Մինսին, որոնք նոյնպէս իրենց կրթութիւնը ստացած էին Կեդրոնականի մէջ⁹:

Սակայն Չերազի տնօրէնութեան շրջանը կը տեւէ երեք տարիներ միայն: 1889 թուականին, երբ նոր էին սկսած պոլսահայութեան շարժումները, սուլթանը հայերը սարսափեցնելու համար կ'որոշէ կախաղան բարձրացնել Մ. Չերազը եւ Հնչակեան ղեկավարներէն Յար. Թրեաքեանը: Չերազն ալ տեղեկանալով այս լուրին, կը թողու իր ամէն ինչը եւ կը փախչի Փարիզ, յետոյ ալ կ'անցնի Լոնտոն:

Չերազի անակնկալ հեռացումէն յետոյ տեսլութեան պաշտօնը առժամապէս կը վարէ Գր. Մարգարեանը:

1889—1890 թթ. միջեւ վարժարանի տեսուչ կը նշանակուի զուիցերիացի Ուիլիմ Ֆրիլիքսը, ո-

⁵ Նոյնը:
⁶ Յայտարարութիւն Ներսէս-Վարժապետեան Ուսումնարանի Ընկերութեան, 1884 դեկտ. 29 (ՏՆՂՍ Ա. Ալպոյաճեան, Մինաս Չերազ):
⁷ «Յայտագիր», տնՂՍ նաև «Տարեգիրք Կեդր. վարժարանի», Պոլիս, 1993 թ.:
⁸ Ա. Ալպոյաճեան, նշվ. աշխ.:
⁹ ՏՆՂՍ Շր. Անտոնեան, Կեանքիս յուշերից, Երևան, 1967 թ., Ս. Վարդանեան, Ղ. Յ. Դ.

րու մասին հետեւեալները կը գրէ Հր. Ան-
ռեանը իր յուշերուն մէջ. «Չգիտեմ, թէ աւելի
անպէտք մարդ կարո՞ղ էր լինել աշխարհի վը-
րայ... եկած օրից ցոյց տուցց իր ոչնչութիւնը,
միշտ յարբած, գինով թրջած անճոռնի պեղծերը
բոռնցքով սրբելով մտնում էր մեր դասարա-
նը...»¹⁰:

Ֆիլիպինի անյաշող տեսութեան շրջանէն
յետոյ նոր տնօրէն կը նշանակուի Օքսֆորտի հա-
մալսարանէն շրջանաւարտ, իրաւաբան Յարու-
թիւն Մոստիշևանը: Վերջինիս տնօրինութեան
օրոք կը մշակուին եւ գործողութեան մէջ կը
դրուին ուսման ու դաստիարակութեան յառաջա-
դէմ ու կատարելագործեալ ծրագրեր: Նոր ու
կարող ոյժերով կը համալրուի նաեւ ուսուցչա-
կան կազմը: Իր շրջանին, 1890-էն յետոյ, վառ-
ժարանը կ'ունենայ հինգ խսորաններ¹¹:

Մոստիշևանը կը պաշտօնավարէ մինչև 1896
թուականը: Երբ այդ թուականին կը վարզանայ
Հայ Դատի պաշտպանութեան խնդիրը, Մոստի-
շևանը, իբրև թարգման կը միջնորդէ Իզմիր-
լեան պատրիարքի եւ Անգլիական դեսպան Ֆի-
լիպ Քրրի միջև: Իզմիրլեանի Ծրուսողմ ար-
տորուելէն յետոյ ալ կ'իթթայ Անգլիա, ուր եւ
կը կնքէ իր մահկանացուն¹²:

1896-ի շարճերու եւ հայահալած քաղաքակա-
նութեան բուռն գործադրմանց ժամանակ Կեդ-
րոնականը մէկ տարի ժամկետով կը փակուի:
1897-ին վերաքացուած վարժարանը իր կողքը
կ'ունենայ նաեւ նախակրթարան մը, ուր ան-
վըճար կրթութիւն պիտի ստանային եւ վարժա-
րան ընդունուելու պիտի պատրաստուէին գաւա-
ռացի պատանիներ ու որբեր¹³:

1897—1909 թթ. միջև վարժարանը կը կա-
ռավարուի ընդհանուր հսկիչ Գառնիկ Բարու-
նակեանի կողմէ, որու օրոք Կեդրոնականին
մէջ կը բացուի նաեւ բարձրագոյն դասըն-
թացը¹⁴:

Այնուհետեւ, 1909—1913 թթ. միջև Մարտի-
րոս Նալպանտեանը, իսկ 1913—1915 թթ. միջև
Ասատուր Խաչատուրեանը կը վարեն վարժա-
րանի տեսչութեան պաշտօնը: 1915—1917 թթ.
վարժարանի գործերը կը վարէ Խնամակալու-
թիւնը, առանց տնօրէնի: 1917—1927-ին Գեղամ
Գաւաթեանը, 1927—1933-ին ալ Պետրոս Ատ-
րուսին կը տնօրինեն Կեդրոնական վարժարանի
գործերը¹⁵:

Ատրուսիի ժամանակ, 1929 թուին, Կարինի
մէջ գոյութիւն ունեցած Սանասարեան վարժա-
րանը Պոլսոյ մէջ վերակենդանացնելու համար
նախատեսուած գումարը կը տրամադրուի Կեդ-

րոնականին, որը այդ թուականէն յետոյ կը
սկսի անուանուիլ նաեւ Կեդրոնական-Սանասա-
րեան վարժարան: Նոյն թուականին վարժա-
րանի նախակրթարանի բաժինը կը փոխարինուի
միամեայ նախապատրաստական լսարանով,
Ատրուսիի ժամանակ վարժարանի մէջ կը հաս-
տատուի նաեւ ցերեկուան ճաշի դրութիւնը, որ
մինչև օրս ալ կը շարունակուի¹⁶:

1933—1936 թթ. միջև վարժարանը կը տըն-
օրինուի Գր. Սարաֆեանի կողմէ, որու օրոք
օրիորդաց էսայեան վարժարանի լիցէի բաժի-
նը կը միացուի Կեդրոնական վարժարանի հա-
մապատասխան բաժնին, մինչև 1932 թուակա-
նը, որմէ յետոյ Կեդրոնականը դարձեալ կը
վերածուի արական վարժարանի:

Սարաֆեանէ յետոյ պաշտօնավարած տնօ-
րէններէն կարելի է յիշատակել հետեւեալներն.
1939—1949 թթ. կը տնօրինէ Էլիզ Գալուբ-
ճեան-Այվաղյանը, որու անուամբ Փարիզի մէջ
գրական մրցանակ է սահմանուած, իսկ 1963—
1972 թթ. վարժարանի տեսուչ կը կարգուի բա-
նասէր ու պատմաբան Հրանտ Տէր-Անդրէաս-
եանը: Վերջինիս ջանքերով Ստանպուլի Պետ-
համալսարանի մէջ շրջան մը գոյութիւն ունե-
ցած էր հայոց լեզուի ու գրականութեան ամ-
բիոն, սակայն Անդրէասեանի մահուրէն յետոյ
փակուած: Հրանտ Տէր-Անդրէասեանը թուրքե-
րէնի է թարգմանած նաև հայ պատմիչներու
գործերը:

1979—1983 թթ. միջև վարժարանը կը մնայ
առանց տնօրէնի: Այս երևույթի զլխավոր ու
միակ պատճառն էր Թուրքիոյ ներքին հասա-
րակական կեանքի անկայուն վիճակը ու 1980—
1983 թթ. միջև պետութեան ղեկին զինուորա-
կաններու ձեռքին գտնուիլը: Այն խառնաշփոթ
օրերուն պետութիւնը անկարող կ'ըլլայ վար-
ժարանի խնամակալութեան կողմէ վաւերացման
ներկայացուած Սիլվա Գուլումճեանի տնօրէնու-
թիւնը հաստատելու, եւ վերջինս մինչև 1983 կը
վարէ վարժարանի փոխ-տնօրէնութեան պաշ-
տօնը: 1983-էն մինչև այսօր Սիլվա Գուլում-
ճեանը յաջողութեամբ կը վարէ վարժարանի
տնօրէնութեան պաշտօնը: Իր շրջանին վար-
ժարանը կ'ապրի նորագոյն պատմութիւնը իր
գոյութեան: 1990—1991 ուսումնական տարե-
շրջանին կ'ընդունուին նաև աշակերտուհիներ
եւ աշակերտութեան թիւը կը բարձրանայ մին-
չև 350-ի:

¹⁰ Հր. Անռեան, նշվ. աշխ.:

¹¹ Նոյնը:

¹² Նոյնը:

¹³ Նոյնը:

¹⁴ Նոյնը:

¹⁵ Տարեգիրք Կեդրոնական վարժարանի, Պոլիս, 1993 թ.:

¹⁶ Նոյնը:

Յակիրձօրէն կ'ուզենք յիշատակել նաեւ այն ուսուցիչ ու աշակերտներու անունները, որոնք յայտնի են բոլորին, եւ որոնք կերտած են Կեդրոնականի հօգին ու իրենց ուրույն դիմագիծը դրոշմած անոր սաներուն վրայ 1886-էն մինչև 1996: Անոնք բարձրացնելով «Կեդրոնական» անունը՝ յաջողօր սերունդներուն աւանդած են «Կեդրոնականացի» կոչուելու բարձր զգացումն ու կաշուով:

Կեդրոնական Ազգ. Վարժարանին մէջ տարբեր շրջաններուն դասախօսած են հետեւեալ հսկայ անձնաւորութիւնները. Թովմաս Թէրզեան, Յակոբ Պարոնեան, Միխաս Չերազ, Միհրան Արիկեան, Ռէթէոս Պերպէրեան, Անտոն Մատաթիա Գարազաշեան, Եղիա Տէմիրճիպաշեան, Մերենց, Յովհ. Հինգելեան, Գարբիէլ Նորատունկեան, Ստ. Կուրտիկեան, Գեղամ Գաւաթեան, Հրանտ Աստատուր, Տիրան Չրաքեան, Լեւոն Շանթ, Յակոբ Օշական, Մաղաքիա արք. Օրմանեան, Եղիշէ արք. Դուրեան, Մատթէոս արք. Իզմիրլեան, Գարեգին արք. Խաչատուրեան, Գարեգին եպիսկ. Սրուանձտեանց, Մելիքիստէք եպիսկ. Մուրադեանց, Կոմիտաս Վարդապետ եւ այլն:

Կեդրոնականի մէջ իրենց ուսումն են կատարելագործած հայութեան ծանօթ հետեւեալ անձերը. Արշակ Չոպանեան, Վահան Թէքէեան, Հրաշեայ Աճառեան, Յակոբ Սիրունի, Միխայր Մեծարեան, Յակոբ Մեծուրի, Յրուխան, Կարապետ Թուր-Սարգսեան, Բարգէն Միւնի, Արշակ Աւպոյաճեան եւ այլն:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆԻ ՆԵՐԿԱՆ

Պոլսահայութիւնը, բառին իսկական առումովը, նահատակուած համայնք մըն է, որովհետեւ այս համայնքի բոլոր արժէքները, գանձերը, մտաւոր պաշարը քանդուած են, ու այսօր այդ բոլորի փոխարէն կայ վախու մէջ ապրող համայնք մը, անցեալի փառքը միայն վայելող հաստատութիւններ, որոնք գրեթէ փոխելու վրայ են իրենց հայկական դիմագիծը: 1915 թուականի շարդէն ֆիզիկապէս զերծ մնացած պոլսահայութիւնը, իր մտաւորականներու արտորով ու սպաննոյթ խեղճացած ու մահու ու կենաց պայքարի մէջ է մտած պահպանելու համար իր հայկականութիւնը:

Տեղասպանութեան տաժան տարիներէն յետոյ, 1923-ին, երբ կը հռչակուի Թուրքիայի հանրապետութիւնը, հայերն ալ, ըստ լոգանի դաշնագրի, կը ճանչցուին որպէս ազգային փոքրամասնութիւն, եւ թոյլ կը տրուի որպէսզի ունենան վարժարաններ, եկեղեցիներ ու համայնքային այլ հաստատութիւններ: Բայց բոլոր այս հաստատութիւնները կը գոնուէին պետական ճնշման տակ եւ շէին կրնար գործել, այնպէս ինչպէս 1915-էն առաջ: Գարասկզբին

250 հազար եղող հայութեան թիւը, այսօր 60 հազար է եւ համայնքի հարիւրէ 10 տոկոսը միայն գիտէ իր մայրենի լեզուն: Պոլսահայութիւնը ցեղասպանութեան կենդանի փաստն է ու ապրող վկայարանը:

Այսօրուան բոլոր հայկական վարժարաններուն նման Կեդրոնականն ալ կ'ենթարկուի Թուրքիայի Ազգային կրթութեան նախարարութեան: Վարժարանը ունի 6 տարուան ուսուցում՝ 3 տարի միջնակարգ, 3 տարի ալ լիցէլ: Նախակրթարան աւարտած ամէն մի հայ ուսանող կրնայ յաճախել Կեդրոնական վարժարան:

Հայոց ազգային ուսումներէն կ'աւանդուին հայերէնն ու կրօնքը, արգիլուած է դասաւանդել հայոց պատմութիւն առարկան: Հայերէնը կը դասաւանդուի շաբաթական 5 պահ, 200 րոպէ, իսկ կրօնքը՝ 1 պահ, 40 րոպէ: Այս առարկաներու դասաւանդումը չի գտնուիր ցանկալի մակարդակի վրայ մասնագէտ ուսուցիչներու շնորհիւ կատարուած: Հայոց լեզուի դասագիրքն է բժ. Շահնուր Շահէի կողմէ պատրաստուած քերականութիւնը, իսկ գրականութեանը՝ Հրանտ ու Զապէլ Ասատուրներու պատրաստած «Նոր Թանգարանը»:

Կը դասաւանդուին նաեւ հետեւեալ առարկաները. Թուրքիայի Ազգ. Պատմութիւն, Թուրքիայի քաղաքական ու յեղափոխութեան պատմութիւն, Ազգ. Պաշտպանութիւն, Թրքերէն, անգլերէն, բնական գիտութիւններ, ֆիզիքա, քիմիա, մատեմատիկա, պիալոգիա, տրամաբանութիւն, երաժշտութիւն, նկարչութիւն, մշակոյթի պատմութիւն, առողջապահութիւն, փիլիսոփայութեան հիմունքներ, սոցիոլոգիա, բարոյագիտութիւն ու մարմնամարզանք:

Վերոյիշեալ առարկաները, եթէ ունին համապատասխան մասնագիտութեամբ հայ դասատուներ, հայերէնով կարելի է դասաւանդել, բացի Թուրքական ազգային առարկաներէ: Նշենք, որ 1992—93 տարեշրջանին, վարժարանի 26 ուսուցիչներէն 10-ը Թուրքեր էին:

1994 թուականին, Թուրքիոյ Ազգ. կրթութեան նախարարութեան կողմէ ընդունուած որոշմամբ, հայ վարժարաններուն մէջ արգիլուցաւ, բացի հայերէնէ, միւս բոլոր առարկաներու հայերէնով դասաւանդումը: Սակայն համայնքային գործիչներու եւ Պատրիարքարանի ջանքերով յաջողօր օրն իսկ շեղեալ համարուեցաւ այդ որոշումը:

Կեդրոնական վարժարանը կը կառավարուի հայ տնօրէնով, որը կը նշանակուի ինամակալութեան կողմէ եւ կը վաւերացուի կառավարութեան: Վարժարանին մէջ կայ նաեւ Թուրք կառավարութեան կողմէ նշանակուող Թուրք փոխտնօրէն մը: Վերջինս համահաւասար իրատեսներն ունի տնօրէնին հետ եւ գրեթէ լրտեսի պաշտօն կը վարէ վարժարանէն ներս:

Օրինակ, վերջերս կեդրոնականցի աշակերտները կ'ուզէին հայերէն ներկայացում մը սարքել ի պատիւ իրենց ուսուցիչներուն: Աշակերտութեան այս բարի ցանկութիւնը, սակայն,

կ'արգիլուի թուրք փոխ-տնօրէնի կողմէ այն պատճառով, որ ներկայացումը տեղի պիտի ունենար հայերէնով:

Այսուամենայնիւ, Կեդրոնականը կը ներկայացնէ յաջող ու բարձրացող կրաֆիկ մը ոչ միայն հայ, այլև թուրք վարժարաններու մէջ: Համալսարանի մտից քննութիւններու ընթացքին կեդրոնականացիներու ցուցարկած փայլուն յաջողութիւնները գնահատանքի կ'արժանանան նոյնիսկ թուրքիայի Ազգ. Կրթութեան նախարարութեան կողմէ: Վերջինս, յատուկ նամակով մը դիմելով Վարժարանի տնօրէնութեան, խընդրեր էր, որպէսզի յայտնուի իրենց այդ յաջողութեանց գաղտնիքը, որ կիրառեն նաև թուրք վարժարաններուն մէջ:

Կեդրոնականացիները ունին նաև աշխոյժ մը շակութային կեանք: Անոնք 1946 թուականին կը հիմնեն Կեդրոնական սանուց միութիւնը: Այնտեղ կը հրատարակուին «Հանդէս Մշակութիւն» եւ յետոյ ալ «Հոպիւնա» պարբերականները: Այնտեղ կը կազմակերպուին գրական երեկոյթներ, բանախօսութիւններ, թատերական ներկայացումներ: 1992—1994 թթ. միջև Պոլսոյ Կեդրոնական սանուց միութեան մականին ներքոյ կազմուեցաւ Պոլսահայ Գրական ակումբը, որը սակայն ունեցաւ կարճ կեանք¹¹: Բաց աստի, սանուց միութեան հովանաւորութեամբ կ'աշխատին «Կեդրոնական» երգչախումբը, «Սայնաթ-Նովա» երգչախումբը, «Քնար» ազգագրական երգերու համոյթը: Կեդրոնականացիները սանուց միութիւններ ունին նաև ԱՄՆ-ի, Տրանսսայի եւ Գանատայի մէջ:

Մշակութային կեանքը աշխոյժ է նաև վարժարանի մէջ: 1996 թուին աշակերտութիւնը կը սկսի հրատարակել «Լուսատու» եւ «Փանտորային տուփը» հայերէն ու թրքերէն պարբերականները: 1996-ին աշակերտութեան շանքերով

մեծ շուրջով տօնուեցաւ նաև Մեծարենցի ծընընդեան 110-ամեակը:

Աշխարհասփիւռ կեդրոնականացիները, անպայմանօրէն, դեկտեմբերի երկրորդ կիրակին կը նշեն «Բաժակի օրը», որ աւանդական հաւաքոյթ է կեդրոնականացիներու: Ուղիղ ժամը 14.30-ին կը բարձրանան բաժակները, եւ կը լսուի «Կեցցէ Կեդրոնականը, կեցցէ կեդրոնականացի» աղաղակները:

Կեդրոնական Ազգային վարժարանի եւ անոր կից գտնուող Ղայաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ նիւթական, բարենորոգման եւ այլ ծախսերը կը հոգացուին պոլսահայ համայնքին կողմէ: Ապրիլի վերջին շաբաթուան կիրակին Ս. Պատարագ կը մատուցուի Գումգարուի Մայր եկեղեցւոյ մէջ եւ ապա հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի երջանկայիշատակ Ներսէս Վարժապետեան պատրիարքի շիրմին վրայ: Կրօնական արարողութիւններէն յետոյ կը սարքուի սիրոյ սեղան, ուր եւ կը հաւաքուին նիւթական նուիրատուութիւններ վարժարանի եւ եկեղեցւոյ համար:

Թէև այսօր փակ է Կեդրոնական վարժարանի խորհրդանիշը դարձած դարաւոր շքամուտքը, որովհետև այդ դուռը կը բացուի ուղիղ եկեղեցւոյ բակը, այդ պատճառով ալ պետութիւնը արգիլած է զայն գործածել: Այդ դուռը, սակայն, բաց է ու պիտի բաց մնայ ամէն մի կեդրոնականացիի սրտին մէջ: Այո, թէև սպանեցին մարմինը, բայց կայ ու կը մնայ հոգին, որ կը շնչէ ու կը ներշնչէ: Պատահական չէ նաև այն, որ Ստանպուլէն նորանկախ Հայաստան եկող առաջին ուսանողները կեդրոնականացիներ են:

ՍԵՆԱՆ ՏԷՏԻՄԷՆՃՅԱՆ
(Կ. Պոլիս)

¹¹ «Ակօս» շաբաթաթերթ», 25 փետրուար, 1996, Պոլիս: